

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԿՅՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 21 » 01 2020 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Վլադիմիր Հարությունյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 133191.7հազ. (մեկ հարյուր երեսուներեք միլիոն հարյուր ինսուսմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշումով և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 133191.7հազ. (մեկ հարյուր երեսուներեք միլիոն հարյուր ինսուամեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Օրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Օրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Ցուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ նախագահ




ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտ ՊՈԱԿ

0015, ք.Երևան, Գր. Լուսավորչի 15

Կենտրոնական գանձապետարան


Հ/հ 900018005380

ՀՎՀՀ 01506257

Տնօրեն




Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Վլադիմիր Հարությունյան)

Հավելված N 1
« 21 » 01 2020 թ.
N 4-23 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Վլադիմիր Հարությունյանը, վկայում ենք, որ

(անուն, ազգանուն)

Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « _____ » _____ 2020 թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 133191.7հազ. (մեկ հարյուր երեսուներեք միլիոն հարյուր իննսունամեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտ ՊՈԱԿ

ՀՀ ԳԱԱ նախագահ

Տնօրեն







Հավելված N 2
« 21 » 01 2020 թ.
N Ծ-23 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):
Ծրագրի իրականացման նպատակը 4 հիմնական գիտական ուղղությունների շրջանակներում (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն) ՀՀ սոցիալ տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան լուծումների առաջադրումն է: Ծրագրի իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվում ՀՀ կառավարության գործունեության ծրագրից բխող հիմնախնդիրների լուծմանը:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
 - Ծրագրի իրականացման ժամանակահատվածը մեկ տարի է՝ սկիզբ 01.01.2020թ., ավարտ՝ 31.12.2020թ.
 - Աշխատանքային խմբերն ըստ ծրագիրը կազմող ենթաբաժինների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների կատարման մասին ներկայացնում են միջանկյալ հաշվետվություններ:
 - Միջանկյալ գիտական արդյունքները և ամփոփիչ գիտական հաշվետվությունը ներկայացվում են պատվիրատուին՝ ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի եզրակացության հիման վրա:
 - Միջանկյալ ամփոփիչ հաշվետվությունների ձևավորումը կատարվում է պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:
4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):
 1. *Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ.*
Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Յուրաքանչյուր պետություն մշտապես կանգնած է հարկային բեռի օպտիմալ մակարդակի հասնելու խնդրի առջև: Հարկային բեռի բարձր մակարդակը սկզբնական շրջանում պետության համար դրական ցուցանիշ է համարվում, քանի որ այն ապահովում է հարկային մեծ եկամուտներ: Սակայն պետք չէ այս խնդրին նայել

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):
Ծրագրի իրականացման նպատակը 4 հիմնական գիտական ուղղությունների շրջանակներում (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն) ՀՀ սոցիալ տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան լուծումների առաջադրումն է: Ծրագրի իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվում ՀՀ կառավարության գործունեության ծրագրից բխող հիմնախնդիրների լուծմանը:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
 - Ծրագրի իրականացման ժամանակահատվածը մեկ տարի է՝ սկիզբ 01.01.2020թ., ավարտ՝ 31.12.2020թ.
 - Աշխատանքային խմբերն ըստ ծրագիրը կազմող ենթաբաժինների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների կատարման մասին ներկայացնում են միջանկյալ հաշվետվություններ:
 - Միջանկյալ գիտական արդյունքները և ամփոփիչ գիտական հաշվետվությունը ներկայացվում են պատվիրատուին՝ ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի եզրակացության հիման վրա:
 - Միջանկյալ ամփոփիչ հաշվետվությունների ձևավորումը կատարվում է պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:
4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):
 1. *Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ.*
Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Յուրաքանչյուր պետություն մշտապես կանգնած է հարկային բեռի օպտիմալ մակարդակի հասնելու խնդրի առջև: Հարկային բեռի բարձր մակարդակը սկզբնական շրջանում պետության համար դրական ցուցանիշ է համարվում, քանի որ այն ապահովում է հարկային մեծ եկամուտներ: Սակայն պետք չէ այս խնդրին նայել

միանշանակ, քանի որ հարկային բարձր բեռը, մյուս կողմից, հանգեցնում է գործարար ակտիվության նվազման: Որպես հետևանք կրճատվում է բնակչության կողմից աշխատելու խթանները, ինչն էլ իր հերթին հանգեցնում է հարկային եկամուտների կրճատմանը: Հետևաբար, հարկային քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր գործոններ, առաջինը, հարկերը պետք է համատեղելի լինեն տնտեսական արդյունավետության հետ: Երկրորդ, հարկային համակարգը պետք է լինի հավասարաբարակ, այսինքն, այն պետք է համատեղելի լինի արդարության սկզբունքների հետ: Եվ քանի որ մեր պետության հիմնական խնդիրներից է տնտեսական աճով պայմանավորված հարկային եկամուտներ ապահովելը և ստվերի կրճատման հաշվին հարկային եկամուտների աճը, ուստի այն էլ պայմանավորել է «Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի ընտրությունը:

Տնտեսական քաղաքականության և քաղաքացու բարեկեցության փոխազդեցության հիմնախնդիրները ՀՀ-ում: Թեմայի նպատակն է իրականացնել վերլուծություն, որը վերաբերում է ՀՀ-ում տնտեսական քաղաքականության և քաղաքացու բարեկեցության փոխազդեցության հիմնախնդիրներին: Հասարական կյանքի զարգացման տարբեր փուլերում մրցակցությունը պահպանվում է հիմնականում հասարակական ինքնակարգավորման մեխանիզմներով: Ներկայումս պետության՝ որպես ինքնիշխանության դրսևորման միջոց է տնտեսական քաղաքականությունը, իսկ թե այն ինչպե՞ս է դրսևորվում, կախված է նրանից թե տվյալ պետությունը ինչ լծակներ է գործադրում տնտեսական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացումն ազդում է քաղաքացու բարեկեցության վրա: Զարգացած երկրներում քաղաքացու բարեկեցությունը բարձր է, քանի որ տնտեսական քաղաքականությունը, վերջին հաշվով, ծառայում է հենց այդ նպատակին: Քաղաքացու կյանքում նրա գոյատևման ոչ մի պատմական ամուր ձև և միջոց չի ձևավորվում առանձին անհատների և խմբերի կամային ցանկությամբ: Բոլորը հանդիսանում են ժամանակի մարտահրավերների իրավիճակների և մարդկային կենսագործունեության պայմանների փոփոխությունների ինքնատիպ պատասխաններ: Այդպես է եղել նաև քաղաքականություն հետ, որը ձևավորվել է հասարակության զարգացման մի շարք միտումների հատման արդյունքում, որոնք ապահովում են քաղաքացու տնտեսական շահերի բավարարումը և հասունացած խնդիրների լուծումը:

Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում: Վերջին տարիներին Հայաստանի տնտեսության քանակական և որակական զարգացման անկայուն լինելը, ՏՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտում մրցունակության անկումը վկայում են տնտեսական առաջընթացի նախկին մոդելի սպառման ու տնտեսական նոր և արմատական փոփոխված մոդելի անհրաժեշտության մասին: Եվ հետևաբար առաջիկա տարիներին և

տեսանելի ապագայում Հայաստանի համար օրակարգային է մնալու տնտեսության զարգացումն ու նրա մրցակցային ներուժի բարձրացումը, ինչն անհնար է առանց բարձր տեխնոլոգիական տնտեսության, ազգային նորարարական էկոհամակարգի ստեղծման և անմիջական մասնակցության, քանի որ ապրում ենք աննախադեպ տեխնոլոգիական նորարարությունների դարաշրջանում, ինչը ազդարարում է «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» սկիզբ: ՀՀ կառավարությունը հատուկ շեշտադրել է Հայաստանում բարձր տեխնոլոգիական ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումն ու երկրում տեղեկատվական հասարակության ձևավորումը: Ուստի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացումը խթանող էկոհամակարգի ստեղծմանը, ներառյալ՝ սկսնակ ընկերությունների հարկային արտոնությունների շարունակականության ապահովմանը, պետական աջակցության նոր օրենսդրական նախաձեռնությունների ընդլայնմանը, ռազմաարդյունաբերական տնտեսության առաջնահերթությունների ուղենշմանը, սկսնակ ընկերությունների կողմից նորարար գաղափարների իրականացումը խթանելու նպատակով ֆինանսական միջոցների հասանելիության ապահովմանը, նորագույն տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը խրախուսող վենչուրային ֆոնդերի, աքսելերատորների հիմնման խթանմանը և այլն:

Ուստի, այսօր արդիական ենք համարում խթանել մարդկային ռեսուրսներում ներդրումների իրականացումը բարձր տեխնոլոգիական տնտեսություններում, նորարար գաղափարների գեներացումն ու սկսնակ SS ընկերությունների ստեղծումը, ինչն իր հերթին կխթանի երկրի տնտեսության աճին, մրցունակության և արտադրողականության բարձրացմանը, հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը և երկրի վարկանիշի բարձրացմանը:

2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ:

Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում: 19-րդ դարի վերջին սկիզբ առած գիտատեխնիկական հեղափոխությունն իր հայտնագործությունների շնորհիվ վերափոխել է նաև արտադրությունը՝ այն դարձնելով գիտելիքահենք և նորարարական գործընթաց: Զարգացած երկրներում նորարարական տեխնոլոգիաներին, գիտելիքահենք արտադրանքին, ծառայություններին և սարքավորումներին բաժին է ընկնում ՀՆԱ հավելաճի զգալի մասը և այս առումով տրամաբանական է հանրության ուշադրությունը նորարարական զարգացման հիմնախնդիրներին: Տնտեսության տարբեր ճյուղերի, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտի նորարարական զարգացման գիտական ուսումնասիրման խնդիրը արդիական է: ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները հնացած հիմնական միջոցները և տեխնոլոգիաներն են, որի պատճառով ոլորտի նորարարական զարգացման նպատակահարմարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկա պայմաններում գրեթե բոլոր ռեսուրսները սահմանափակ են, և առաջանում է ռեսուրսախնայողություն: Ի դեպ, պետք է նշել, որ ոլորտը շարունակում է

զարգանալ մեծապես էքստենսիվ ճանապարհով: Ներկայումս ոլորտի ներդրումային ակտիվությունը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա, ինչը պայմանավորված է ինչպես ողջ տնտեսության այնպես էլ առանձին մարզերի ցածր տնտեսական վիճակով:

Ելնելով այս ամենից ուսումնասիրվելու և վերլուծվելու են ՀՀ գյուղատնտեսության ոլորտում նորարարությունների զարգացման հիմնախնդիրները, առանցքային խոչընդոտները, գնահատվելու է ոլորտի նորարարական ներուժը, ինչպես նաև տրվելու են համապատասխան առաջարկություններ նշված հիմնախնդիրների իրագործման ուղղությունների վերաբերյալ:

3. Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ:

Արտահանումը՝ որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ոլորտային ռազմավարություն): Ներկայումս փոքր շուկա ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, սահմանափակ ներքին պահանջարկի վրա հիմնվելով՝ հնարավոր չէ երկարաժամկետ հատվածում ապահովել կայուն տնտեսական աճ: Այդ պատճառով նման երկրների համար տնտեսակ աճի ապահովման կարևորագույն գործոններից է արտահանումը: Ներկայումս աշխարհում արտահանման գծով մեծ հաջողություններ են արձանագրում այն երկրները, որոնց արտահանման մեջ գերակշռում են միջին և բարձր տեխնոլոգիատար ապրանքները: Հայաստանը այս տեսանկյունից էականորեն հետ է մնում համաշխարհային միտումներից: ՀՀ արտահանման մեջ աստիճանաբար աճում է ռեսուրսատար ապրանքների տեսակարար կշիռը՝ ի հաշիվ բարձր և միջին տեխնոլոգիատար ապրանքների տեսակարար կշռի նվազման: Բացի այդ, ՀՀ արտահանումը ունի ևս մեկ կարևոր հիմնախնդիր՝ արտահանման չափից շատ կենտրոնացվածությունը: Ուստի այս միտումով զարգացման պարագայում արտահանումը չի կարող երկարատև կայուն աճի հենասյուն հանդիսանալ ՀՀ-ում: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է մշակել տնտեսական աճին առավելագույնս նպաստող արտահանման խթանման ռազմավարություն՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր ոլորտի հնարավորություններն ու ներուժը: Թեմայի շրջանակներում էկոնոմետրիկ հաշվարկների հիման վրա կգնահատվի ՀՀ արտահանման յուրաքանչյուր ոլորտի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա և կառաջարկվի յուրաքանչյուր ոլորտի արտահանման զարգացման տեսլական՝ հնարավոր կառուցակարգերով:

Թվային տնտեսությունը՝ որպես ՀՀ զարգացման նոր հարացույց. մարտահրավերներ, հնարավորություններ և հեռանկարներ: Ներկայիս պայմաններում համաշխարհային տնտեսության մեջ առանցքային դեր ունեն այն ընկերությունները, որոնք օգտագործում են թվային տեխնոլոգիաներ և ապահովում են տնտեսությունը թվային ռեսուրսներով: Արագորեն տարածվող թվային տեխնոլոգիաները վերափոխում են տնտեսական և սոցիալական գործունեության բազմաթիվ տեսակները: Նոր տեխնոլոգիաները կարող են էական ներդրում ունենալ կայուն զարգացման նպատակների իրականացման գործում:

Թվային ոլորտի զարգացման ռազմավարությունները և գլոբալիզացիայի հետագա ուրվագծերը վերանայելու համար անհրաժեշտ է նոր տեխնոլոգիաների ինտեգրված մոտեցում, համագործակցության ամրապնդում և յուրաքանչյուր պետության ավելի հմուտ դեկավարում: Այս համատեքստում Հայաստանի Հնարապետությունը չի կազմում բացառություն: Յետազոտությունից ակնկալվող արդյունքներն են՝ Հայաստանի Հնարապետության տնտեսության զարգացման նպատակով թվային տեխնոլոգիաների ներդրման դերի (ղրական հետևանքների և հավանական ռիսկերի) գնահատումը և առաջնահերթ ոլորտների ընտրությունը:

4. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն


Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության: Հետազոտության առարկան առանձին մտածողների հայացքների վերլուծությունն է, հայ տնտեսագիտական մտքի արդի պրոցեսների լուսաբանությունը, որը կարևոր է ներկայում և գործնական, և տեսական առումներով: 2014-ին լույս է տեսել «Ուրվագիծ արդի տնտեսագիտական մտքի պատմության» մենագրությունը՝ երկու գլխով: Սակայն, հրատարակված աշխատությունների մատենագիտական ցանկը համալրվել է նոր հետազոտություններով (մենագրություններ, ամսագրային հոդվածներ, ժողովածուներ), որոնք իրենց արժարժույթների մեջ արտահայտում են հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքը:

Կազմակերպության
ունօրեն՝


(ստորագրություն)

(Վլադիմիր Հարությունյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Վլադիմիր Հարությունյան)

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ


«ՀՀ ԳԱԱ Մ.Ֆոթոսայանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

h/h	Բրականացվելիք միջոցառման անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	ՀՀ ԳԱԱ Մ.Ֆոթոսայանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր	Գիտական հետազոտությունների 4 ուղղություններով 1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ 2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ 3. Ծառայությունների ոլորտի զարգացում ու ազդեցությունը գյուղատնտեսության հիմնախնդիրներ 4. Տեսական	Գիտական թեմաների կատարում ✓ Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում ✓ Տնտեսական քաղաքականության և քաղաքացու բարեկեցության փոխազդեցության հիմնախնդիրները ՀՀ-ում ✓ Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում ✓ Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ✓ Արտահանումը՝ որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ուրրտային ռազմավարություն)	Գիտական հոդվածների, մենագրությունների հրատարակում	I եռամսյակ II եռամսյակ III եռամսյակ IV եռամսյակ	26,638.4 33,297.9 33,297.9 39,957.5

* Բրականացվելիք միջոցառումները ներկայացնել ենտնտեսական փուլերով


		հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն	<input checked="" type="checkbox"/> Թվային տնտեսությունը՝ որպես ՀՀ զարգացման նոր հարացույց. մարտահրավերներ, հնարավորություններ և հեռանկարներ <input checked="" type="checkbox"/> Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության			133191.7
Հնդամներ						

Կազմակերպության
 տնօրեն՝


 (ստորագրություն)

(Վլադիմիր Հարությունյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝


 (ստորագրություն)

(Վլադիմիր Հարությունյան)

Հավելված N 4
 « 21 » 01 2020 թ.
 N Գ-23 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ ԳԱԱ Ս.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի


հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	110,300.0	22,060.0	27,575.0	27,575.0	33,090.0
2	տնտեսական և այլ ծախսեր*	22,891.7	4,578.4	5,722.9	5,722.9	6,867.5
ԸՆԴԱՄԵՆԸ		133,191.7	26,638.4	33,297.9	33,297.9	39,957.5

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝


 (ստորագրություն) (Վլադիմիր Հարությունյան)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝



 (ստորագրություն) (Կարինե Հակոբյան)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսելի ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ *

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կունունալ ծառայություններ, այդ թվում՝	6900
	էլեկտրաէներգիայի ծառայություն	3600
	գազի ծառայություն	0.0
	ջրամատակարարման ծառայություն	1100
	կապի ծառայություն	2200
	աղբահանություն	0.0
2	Գույք	0.0
3	Սարքեր և սարքավորումներ	4202.0
4	Նյութեր	1900.0
5	Գործուղումներ	1500.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	880.0
7	Արշավախմբեր	0.0
8	Հրատարակման ծախսեր	3409.0
9	Այլ	4100.7
Ընդամենը		22891.7

Կազմակերպության տնօրեն՝  (վլադիմիր Հարությունյան)
 (ստորագրություն)

Կազմակերպության
 գլխավոր հաշվապահ՝  (Կարինե Հակոբյան)
 (ստորագրություն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

Հավելված N 5
 « 21 01 2020 »
 N 7-23 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և
զարգացման » ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1.	Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի	Տնօրեն, բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխ.	տ.գ.դ	450.0
2.	Սարգսյան Լիլիթ Նորայրի	Փոխտնօրեն, բաժնի վարիչ, գիտաշխատող	տ.գ.թ	325.0
3.	Բաղդասարյան Քրիստինե Յուրիի	Գիտ. քարտուղար, ավագ գիտաշխ.	տ.գ.թ	300.0
4.	Սուվարյան Յուրի Միքայելի	Տնօրենի խորհրդական	տ.գ.դ	100.0
5.	Հակոբյան Կարինե Գեղամի	գլխավոր հաշվապահ		300.0
6.	Սարինյան Ռոբերտ Ներսեսի	բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	տ.գ.դ	210.0
7.	Բաբայան Էբա Արկաղիի	առաջատար գիտաշխ.	ա.գ.թ	140.0
8.	Զատիկյան Ալվարդ Թևոսի	ավագ գիտաշխ.	տ.գ.թ	140.0
9.	Գաբրիելյան Բելլա Վալերիի	ավագ գիտաշխ.	տ.գ.թ	140.0
10.	Մանուչարյան Մերի Գագիկի	բաժնի վարիչ, ավագ գիտաշխ.	տ.գ.թ	190.0
11.	Դավաթյան Սվետլանա Արկաղիի	բաժնի վարիչ, գիտաշխատող	տ.գ.թ	190.0
12.	Զախարյան Արմինե Գրիգորի	գիտաշխատող	տ.գ.թ	130.0
13.	Պողոսյան Շողեր Պյոտրի	գիտաշխատող	տ.գ.թ	130.0
14.	Հակոբյան Եվգենյա Արտաշեսի	գիտաշխատող, ասպիրանտուրայի պատասխանատու	տ.գ.թ	180.0
15.	Մանուկյան Գրիգոր Թաթուլի	գիտաշխատող	տ.գ.թ	130.0
16.	Ազատյան Լիանա Մամվելի	գիտաշխատող		120.0
17.	Փարսադանյան Տաթևիկ Սմբատի	կրտսեր գիտաշխ.	տ.գ.թ	110.0
18.	Իսահակյան Ռազմիկ Կամոյի	կրտսեր գիտաշխ	տ.գ.թ	110.0
19.	Բախշյան Գևորգ Արտաշեսի	կրտսեր գիտաշխ	տ.գ.թ	110.0

20.	Հարությունյան Գևորգ Արամի	կրտսեր գիտաշխ	տ.գ.թ	140.0
21.	Շահինյան Տաթևիկ Վազգենի	կրտսեր գիտաշխ		100.0
22.	Սարգսյան Անուշ Տիգրանի	կրտսեր գիտաշխ		50.0
23.	Թորգոմյան Սևակ Վանիկի	կրտսեր գիտաշխ		100.0
24.	Պետրոսյան Դավիթ Արմենակի	կրտսեր գիտաշխ., կայքի պատասխ.		150.0
25.	Խաչատուրյան Արամ Վահագնի	կրտսեր գիտաշխ	տ.գ.թ	55.0
26.	Մատինյան Կարինե Անուշավանի	տնտեսագետ		90.0
27.	Պետրոսյան Լիլիթ Մանվելի	տնտեսագետ		92.6
28.	Կյուրեղյան Արփինե Մելիակի	տնտեսագետ		92.6
29.	Գրիգորյան Դոնարա Հովիկի	տնտեսագետ		92.6
30.	Մարգարյան Սոնա Ատոմի	տնտեսագետ		47.0
31.	Մուրադյան Մերի Համբարձումի	տնտեսագետ		92.6
32.	Կարապետյան Ռուզաննա Արմենակի	կադրերի ավագ տեսուչ, հաշվետար		250.0
33.	Ավագյան Նարինե Հրանտի	գրադարանավար		130.0
34.	Մանուկյան Վլադիկ Լևոնի	ընդհանուր բաժնի վարիչ		150.0
35.	Բաբայան Մառլենա Մկրտչի	համակարգչային օպերատոր		125.0
36.	Սարաֆյան Դիաննա Գևորգի	համակարգչային օպերատոր		125.0
37.	Համբարձումյան Սարիետա Կառլենի	համակարգչային օպերատոր		125.0
38.	Առաքելյան անահիտ Միշայի	քարտուղար- գործավար		140.0
39.	Մարկոսյան Անահիտ Խաչատուրի	հրատարակչության պատասխանատու		200.0
40.	Մանուկյան Արտաշես Մուշեղի	տնտեսական աշխատող		89.6
41.	Անտոնյան Արսեն Ռուբենի	վարորդ		150.0
42.	Մելքոնյան Ռադիկ Մուշեղի	պահակ		100.0
43.	Կարապետյան Հասմիկ Հենրիկի	հավաքարար		134.0
44.	Թափուր	գլխավոր գիտաշխ	տ.գ.դ	190.0
45.	Թափուր	գլխավոր գիտաշխ	տ.գ.դ	190.0
46.	Թափուր	առաջ. գիտաշխ	տ.գ.դ	170.0
47.	Թափուր	ավագ.գիտաշխ	տ.գ.թ	140.0
48.	Թափուր	ավագ.գիտաշխ	տ.գ.թ	140.0
49.	Թափուր	ավագ.գիտաշխ	տ.գ.թ	140.0
50.	Թափուր	ավագ.գիտաշխ	տ.գ.թ	140.0
51.	Թափուր	գիտաշխատող	տ.գ.թ	130.0
52.	Թափուր	գիտաշխատող	տ.գ.թ	130.0

53	Թափուր	գիտաշխատող	տ.գ.թ	130.0
54	Թափուր	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	120.0
55	Թափուր	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	120.0
56	Թափուր	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	110.0
57	Թափուր	կրտսեր գիտաշխատող		110.0
58	Թափուր	կրտսեր գիտաշխատող		106
59	Թափուր	տնտեսագետ		92.6
Ընդամենը				8484.6

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն)



(Վլադիմիր Հարությունյան)

(անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝

(ստորագրություն)



(Ռուզաննա Կարապետյան)

(անուն ազգանուն)

